

Արձանագրություն №5/2017-2018

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2018թ. մարտի 22-ին տեղի ունեցած թիվ 5 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 65-ը (վաթսունհինգ):
Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. **2018-2019 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգի հաստատում** (զեկ. պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):
2. **2018-2019 ուսումնական տարվա հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգի հաստատում** (զեկ. պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):
3. **ԵՂՆ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին** (զեկ. անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության պետ Ա. Ա. Թադևոսյան):
4. **ԵՂՆ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության կանոնադրության հաստատում** (զեկ. անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության պետ Ա. Ա. Թադևոսյան):
5. **Հաղորդում ԵՂՆ կոսմոլոգիայի գիտահետազոտական կենտրոնի գործունեության մասին** (զեկ. կենտրոնի տնօրեն Վ. Գ. Գուրգադյան):
6. **Զեկուցում. կրիպտոարժույթների ֆենոմենը** (զեկ.՝ ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ Հ. Գ. Մնացականյան):
7. **Ընթացիկ հարցեր.**
 - 7.1. «Ժուռնալիստիկա և հաղորդագրություն» (ԺԳ) պրակը հրատարակության երաշխավորելու մասին:

Գիտքարտուղար Մ. Սողոմոնյանն առաջարկեց լսել գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի և էթիկայի հարցերի հանձնաժողովի կազմերում փոփոխություններ կատարելու մասին հարցը: Առաջարկն ընդունվեց: Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. **Լսեցին.** – **2018-2019 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգը հաստատելու մասին:** Պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյանը նշեց, որ նշված կանոնակարգերը հաստատվում են յուրաքանչյուր ուսումնական տարի: Ընթացիկ ուստարում փոփոխությունները ժամկետներից բացի, վերաբերում են նաև հետևյալին. 1/ առաջարկվում է ընդունելությունը կազմակերպել 2 փուլով, 2/ առաջարկվում է պետական պատվերով ուսումնառության մրցույթի մասնակցելու հնարավորություն տալ ոչ միայն տվյալ տարվա և մասնագիտության բակալավրի շրջանավարտներին, այլև վերջին 3 տարիների շրջանավարտներին:

Արտահայտվեցին. – Սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ա. Մկրտիչյանը առաջարկեց առկա ուսուցմամբ ընդունելության կանոնակարգի 6.2. կետում (որպես միայն մագիստրոսական ծրագրերի մակարդակով գործող) մասնագիտությունների շարքում ներառել նաև «Մարդկային ռեսուրսների կառավարում» մասնագիտությունը: Առաջարկն ընդունվեց:

Որոշեցին. –

- Հաստատել «Երևանի պետական համալսարանի առկա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության կարգը»:

- Հաստատել «Երևանի պետական համալսարանի հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության կարգը»:

2. **Լսեցին. - ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:**

Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության պետ Ա. Ա. Թադևոսյանը ներկայացրեց առաջարկվող փոփոխությունները և լրացումները՝ դրանց անհրաժեշտությունը բացատրելով գործող օրենսդրական դաշտի փոփոխությամբ, ի մասնավորի, զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին օրենքի ընդունմամբ զինծառայողի սոցիալական վիճակի մասին օրենքի ուժը կորցնելով:

Որոշեցին. – հաստատել կանոնակարգում առաջարկվող հետևյալ փոփոխությունները.

1.1. Կանոնակարգի 3-րդ կետը «Ուսանողական նպաստը» բառերից հետո լրացնել «(ուսանողական կրթաթոշակը)» բառերով:

1.2. Կանոնակարգի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են բուհերի ընդունելության ընդհանուր մրցույթով առկա ուսուցման համակարգ ընդունված և բակալավրի կամ մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների վրա:

Սույն կանոնակարգի 14-րդ, 19-23-րդ (բացառությամբ՝ 19.9-րդ ենթակետի) կետերի դրույթները, ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման մասով տարածվում են նաև բուհերի ընդունելության ընդհանուր մրցույթով հեռակա ուսուցման համակարգ ընդունված և բակալավրի կամ մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների վրա:»:

1.3. Կանոնակարգի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում (ուսանողական կրթաթոշակ) տրամադրվում է՝

5.1. մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով,

5.2. օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերում ընդգրկված անձանց՝

ա) առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

բ) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

գ) գոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան երեխա-ուսանողներին՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

դ) ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայող-ուսանողներին՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

ե) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին:

Ընդհանուր մրցույթից դուրս, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հատկացված անվճար տեղերի հաշվին ընդունված ուսանողները՝ որպես նպատակային ուսուցմամբ ընդունվածներ, օգտվում են իրենց արտոնությունից մինչև ուսումնառության ավարտը:

Սույն կանոնակարգի 5.2. կետի «ա» և «ե» ենթակետերում նշված կարգավիճակ ունեցող ուսանողներին ուսանողական նպաստներ տրամադրվում են 1-ին կուրսից մինչև տվյալ կրթական ծրագրով ուսումնառության ավարտը:

Սույն կանոնակարգի 5.2. կետի «բ», «գ» և «դ» ենթակետերում նշված կարգավիճակ ունեցող ուսանողներին համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում ուսանողական նպաստներ տրամադրվում են 1-ին կուրսի սկզբում և վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի վերջում:»:

1.4. Կանոնակարգի 7-րդ կետում «ամրագրված սկզբունքով» բառերը փոխարինել «սահմանված մրցութային կարգով» բառերով:

1.5. Կանոնակարգի 11-րդ կետի երկրորդ պարբերությունում «իրավաբանական բաժնի» բառերը փոխարինել «իրավական ապահովման բաժնի» բառերով:

1.6. Կանոնակարգի 19.1.-րդ ենթակետում «ապահովության» բառը փոխարինել «անապահովության» բառով:

1.7. Կանոնակարգի 19.6.-րդ ենթակետը «ազատամարտիկ» բառից հետո լրացնել «(բժշկատնօրհանական փորձաքննական որոշման և ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի կամ երկրապահ կամավորականի վկայականի ներկայացման դեպքում)» բառերով:

1.8. Կանոնակարգի 19.7.-րդ ենթակետում «(համապատասխան փաստաթղթի ներկայացման դեպքում)» բառերը փոխարինել «(զինվորական գրքույկում համապատասխան գրառման առկայության դեպքում)» բառերով:

1.9. Կանոնակարգի 19.8.-րդ ենթակետում «անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների» բառերը փոխարինել «անապահովության 0-ից բարձր մինչև սահմանային միավորի շեմը միավոր ունեցող ընտանիքների» բառերով:

1.10. Կանոնակարգի 19.10.-րդ ենթակետում «(համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում)» բառերը փոխարինել «(ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի կամ երկրապահ կամավորականի վկայականի ներկայացման դեպքում)» բառերով:

1.11. Կանոնակարգի 23.-րդ կետը լրացնել հետևյալ պարբերությամբ.

«Սույն Կանոնակարգի 19-րդ կետով սահմանված ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում ուսանողին տրամադրվում է մեկ ուսումնական կիսամյակի համար, բացառությամբ 19.9. և 19.13. կետերի, որում սահմանված դեպքերում ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցումը տրամադրվում է մեկ ուսումնական տարվա համար:»:

3. Լսեցին. - ԵՊՀ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության կանոնադրությունը հաստատելու մասին: Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության պետ Ա. Ա. Թադևոսյանը նշեց, որ ԵՊՀ իրավաբանական ու կադրերի բաժինների հետ տեղի ունեցած կազմակերպական-կարգավիճակային փոփոխությունների արդյունքում անհրաժեշտություն է առաջացել նոր մարմնի՝ ԵՊՀ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության կանոնադրությունը մշակել և ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը: Ա. Թադևոսյանը նշեց, որ կանոնադրության նախագիծը քննարկվել է գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի կողմից և երաշխավորվել գիտական խորհրդի հաստատման:

Որոշեցին. – հաստատել ԵՊՀ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության կանոնադրությունը:

4. Լսեցին. - Հաղորդում ԵՊՀ կոսմոլոգիայի գիտահետազոտական կենտրոնի գործունեության մասին: Կենտրոնի տնօրեն Վ. Գ. Գուրգադյանը ներկայացրեց կոսմոլոգիայի խմբի վերջին 10 տարիների գործունեությունը: Վ. Գուրգադյանն անդրադարձավ այն ծրագրերին ու հետազոտական դրամաշնորհներին, որոնք խումբն իրականացնում է արտասահմանյան առաջատար ընկերությունների հետ համագործակցությամբ և որոնք մեծ ճանաչում են ձեռք բերել մասնագիտական շրջանակներում:

Արտահայտվեցին. – Ռեկտոր Ա. Սիմոնյանը բարձր գնահատեց կոսմոլոգիայի հետազոտական խմբի գործունեությունը՝ նշելով, որ թեև գնալով ֆինանսավորումը կրճատվում է, սակայն ոլորտը

խիստ կարևոր է ԵՊՀ-ի համար և Համալսարանը պետք է անի հնարավոր ամեն ինչ՝ խմբի ֆինանսավորումն ապահովելու համար:

Որոշեցին. – Վ. Գուրգադյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

5. **Լսեցին.** – **Ձեկուցում կրիպտոարժույթների ֆենոմենի մասին:** Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ Հ. Մնացականյանը, մասնավորապես, անդրադարձավ կրիպտոարժույթների երևույթին, դրանց տեսակներին, Բիթքոինի ստեղծման պատմությանը, կրիպտոարժույթների փոխանցման մեխանիզմներին, Մայնինգի երևույթին, կրիպտոարժույթների կապիտալիզացիային ըստ տեսակների, ներկայիս շուկային, առավելություններին ու թերություններին:

Որոշեցին. – Հ. Մնացականյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին.** - «Ժուռնալիստիկա և հաղորդագրություն» (ԺԳ) պրակը հրատարակության երաշխավորելու մասին: Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Ն. Մարտիրոսյանը ներկայացրեց նշված հարցում ֆակուլտետի գիտական խորհրդի միջնորդությունը:

Որոշեցին. - «Ժուռնալիստիկա և հաղորդակցություն» (ԺԳ) պրակը երաշխավորել հրատարակության:

2. **Լսեցին.** - Գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի և էթիկայի հարցերի հանձնաժողովի կազմերում փոփոխություններ կատարելու մասին: Գիտքարտուղար Մ. Սողոմոնյանը նշեց, որ Ուսանողական խորհրդի նախկին նախագահ Արմեն Խաչիկյանի լիազորությունների դադարմամբ վերջինս այլևս չի հանդիսանում ԵՊՀ գիտական խորհրդի անդամ և պետք է նրան հանել նաև գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի և էթիկայի հարցերի հանձնաժողովի կազմերից: Ա. Միմոնյանը սովորող անդամներին դիմեց՝ հանձնաժողովների նոր անդամ/անդամներ առաջարկել: Սովորող անդամները երկու հանձնաժողովների կազմում առաջարկեցին ՈՒԽ նախագահ Դ. Ափոյանի թեկնածությունը: Առաջարկն ընդունվեց:

Որոշեցին. –

- Ուսանողական խորհրդի նախագահի լիազորությունները վայր դնելու և ԵՊՀ գիտական խորհրդի կազմից դուրս գալու կապակցությամբ Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի և էթիկայի հարցերի հանձնաժողովի կազմից հանել Արմեն Նվերի Խաչիկյանին:
- Հանձնաժողովների կազմում հաստատել ուսանողական խորհրդի նախագահ, գիտական խորհրդի անդամ Դավիթ Արարատի Ափոյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

29.03.2018թ.